ՀԱՅԱՍՏԱՆ

ԳԱԾԻՆՔ

365 ՕՐ

ԱՊԱԳԱՆ ՍԿՍՎՈՒՄ Է ՀԻՄԱ

365 ՕՐ. ԱՊԱԳԱՆ ՍԿՍՎՈՒՄ Է ՀԻՄԱ

Իշխանության ապաշնորհ կառավարման, ապազգային վարքագծի և հանցավոր սխալների պատճառով պետականությունը կանգնած է փլուզման վտանգի առջև: Հապաղելու ժամանակ չկա: Համոզված ենք, որ արդարության և ազատության սկզբունքներով, ազգային պետական քաղաքականությամբ և ներազգային համերաշխությամբ կարող ենք կերտել ամուր պետություն, հաստատել կայուն խաղաղություն և զարգացման իրական պայմաններ ապահովել յուրաքանչյուրի համար:

«Հայաստան» դաշինքը ներկայացնում է «365 օր+. Ապագան սկսվում է հիմա» առաջնահերթ գործողությունների ծրագիրը՝ հիմնված դաշինքի կազմավորման հռչակագրի վրա: Այն կդառնա ապագա կառավարության գործունեության ծրագրի հիմքը՝ներառելով ընտրողների հետ քննարկման արդյունքները:

Արժանապատիվ խաղաղություն

1. Մենք հանդես ենք գալիս հավասարակշիռ և հետևողական արտաքին քաղաքականության, արդյունավետ տարածաշրջանային համագործակցության և բոլոր հարևանների հետ արժանապատիվ հարաբերությունների հաստատման և զարգացման օգտին:

2. Աշխարհաքաղաքական նոր մարտահրավերներին համահունչ, տարածաշրջանում շահեր հետապնդող դաշնակից երկրների հետ կձևավորվեն համագործակցության, փոխօգնության և տարածաշրջային խաղաղության հաստատման նոր մոդելներ:

3. Մենք մերժում ենք պարտվածի հոգեբանությունը՝ վստահ լինելով, որ Հայաստանն իր դաշնակիցների հետ կարող է ձևավորել տարածաշրջանային նոր օրակարգ և պաշտպանել սեփական շահերը:

4. Կողմ լինելով Հարավային Կովկասում կայուն խաղաղության, կոմունիկացիաների ու բաց սահմանների գաղափարին՝ հաստատակամ ենք դաշնակիցների հետ գտնել խելամիտ և փոխշահավետ լուծումներ՝ դրանք բխեցնելով մեր ազգային և պետական շահից:

5. Ընդլայնելու ենք Հայոց ցեղասպանության համընդհանուր ճանաչումն ու դատապարտումը, հետապնդելու ենք Հայ ժողովրդի անժամանցելի իրավունքների իրականացումը՝ որպես նոր ցեղասպանությունների կանխարգելման նախապայման, որպես սերունդների համար անվտանգության երաշխիք և

տարածաշրջանում երկարաժամկետ և արժանապատիվ խաղաղության գրավական:

6. Հայաստանը՝ ՌԴ հետ կվերագործարկի փոխհարաբերությունները բոլոր ուղղություններով և, տարածաշրջանային մարտահրավերներին համահունչ, կձևավորի զարգացման նոր ուղղություններ:

7. Խորացնելու և ընդլայնելու ենք ռազմավարական գործընկերությունը Վրաստանի Հանրապետության հետ, որպես անմիջական հարևանի և աշխարհաքաղաքական ընդհանուր շահեր ունեցող երկրի: Վրաստանը բարեկամ երկիր է, ուր իրացվում են ջավախահայության ազգային ինքնությունը պահպանելու և զարգանալու լիարժեք հնարավորություններ:

8. Ամրապնդվելու են և որակական նոր հանգրվանի են հասցվելու Իրանի հետ համագործակցության և գործընկերության հարաբերությունները:

9. Որակական նոր մակարդակի է հասցվելու Չինաստանի հետ համագործակցությունը, այդ թվում՝ տարածաշրջանային փոխգործակցության համատեքստում:

10. Շարունակելու ենք՝ ՄԱԿ, ԱՊՀ, ԵԱՏՄ, ՀԱՊԿ, ԵԱՀԿ, ԵԽ, ԵՄ և այլ միջազգային կազմակերպություններում լիարժեք կատարել Հայաստանի ստանձնած պարտավորությունները և իրացնել անդամակցության ընձեռած բոլոր հնարավորությունները:

11. Երկկողմանի կառուցողական և արդյունավետ համագործակցություն ենք ծավալելու ԱՄՆ-ի, Եվրամիության անդամ երկրների հետ: Խաղաղությունը խթանելու, մեր ազգային շահերի պաշտպանության հրամայականից բխող երկխոսություն և փոխշահավետ արտաքին քաղաքականություն ենք վարելու Հնդկաստանի, Մերձավոր Արևելքի երկրների, Կանադայի, Հարավային Ամերիկայի, Ճապոնիայի և այլ երկրների հետ:

44-օրյա պատերազմի հետևանքների հաղթահարում

12. Անհապաղ ձեռնամուխ ենք լինելու 44 օրյա պատերազմում գերեվարված բոլոր անձանց վերադարձին, զոհվածների և անհետ կորածների տվյալների հստակեցմանը:

13. Ձգտելու ենք թուրք-ադրբեջանական ագրեսիայի և հայ ժողովրդին պատճառված կորուստների միջազգային ճանաչմանը, և խաղաղ

բանակցությունների նոր փուլով արցախյան հիմնախնդրի արդարացի լուծմանը: Ջանքեր ենք գործադրելու ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների միջնորդությամբ բանակցային գործընթացի վերսկսման համար՝ նպատակաուղղված ինքնորոշման իրավունքի հիման վրա Արցախի տարածքի վերականգնմանը և Հայաստանի Հանրապետության հետ երաշխավորված ցամաքային անվտանգ կապի ապահովմանը:

14. Անհապաղ ձեռնամուխ ենք լինելու թուրք-ադրբեջանական ագրեսիայի ծանր հետևանքները մեղմելու աշխատանքներին: Ստեղծելու ենք վիրավորների վերականգնման նոր և լիարժեք պայմաններ, այդ թվում՝ Կոնդի Պետական ամառանոցները վերածելով ժամանակակից վերականգնողական կենտրոնի: Բոլոր փախստականներին ապահովելու ենք բնակարաններով և կյանքի արժանապատիվ պայմաններով, հնարավորինս աջակցելու ենք նրանց նախկին բնակավայրեր վերադարձին: Բոլոր զոհերի և վիրավորների ընտանիքներին տրամադրելու ենք անհրաժեշտ ֆինանսական աջակցություն:

15. Հրատապ լուծվելու են պատերազմի հետևանքով բեռնափոխադրումների, տրանսպորտային ուղիների, գյուղատնտեսական գործունեության, ինչպես նաև կայուն եկամտի կորստի հետ կապված անվտանգության և սոցիալ-տնտեսական խնդիրները:

16. Հայկական պատմա-մշակութային և կրոնական ժառանգության պահպանության հիմնախնդիրները դառնալու են Հայաստանի և միջազգային կազմակերպությունների համագործակցության առաջնահերթություններից:

Տարածաշրջանային համագործակցության նոր օրակարգ

17. Հայաստանը կարող է դառնալ կոմունիկացիաների հատման տարածաշրջանային կենտրոն, տարանցիկ երկիր, որը կկապի Սև ծովի և Պարսից ծոցի երկրները, ինչպես նաև՝ վերականգնվող նոր Մետաքսի ճանապարհը:

18. Զարգացման այս փուլում գլխավոր ձեռքբերումներից մեկը կլինի Հայաստանի վերածումը տարանցիկ երկրի: Հյուսիս-հարավ կոմունիկացիոն միջանցքի մաս դառնալու հնարավորություն կա՝ նկատի առնելով նաև այն հանգամանքը, որ այդ հայեցակարգն ինտենսիվորեն առաջ են մղում մեր բարեկամ երկրները և ռազմավարական գործընկերները:

19. Նոր թափով աշխատելու ենք Վրաստան-Հայաստան-Իրան էլեկտրաէներգետիկ հարթակի ձևավորման ուղղությամբ՝ ապահովելով Հայաստանում արտադրված էլեկտրաէներգիայի ավելցուկի արտահանումը տարածաշրջանի այլ երկրներ:

20. Քաջարանի թունելի կառուցումը և Հյուսիս-հարավ ճանապարհի հարավային հատվածի շինարարությունը ունենալու են ռազմավարական նշանակություն: Մենք այն դիտարկում ենք Իրանի հետ սահմանին ազատ տնտեսական գոտու և Իրան-ԵԱՏՄ հարաբերությունների համատեքստում: Նման ենթակառուցվածքային լուծումները կխթանեն Պարսից ծոցի և սևծովյան նավահանգիստների միջև ավտոմոբիլային փոխադրումները:

21. Հանդես ենք գալու տարածաշրջանում հեռահաղորդակցության ենթակառուցվածքների զարգացման համար նոր հնարավորությունների, Վրաստան-Հայաստան-Իրան՝ կապի նոր մայրուղիներ ստեղծելու և եղածներն ընդլայնելու նախաձեռնությամբ: Այն կմեծացնի մասնակից երկրներում տեղեկատվական տեխնոլոգիաների և նորարարությունների զարգացման հնարավորությունները, կնպաստի տարածաշրջանում համագործակցության թվային նոր հարթակի ձևավորմանը:

22. Աջակցելու ենք հաղորդակցության զարգացման այն նախագծերին, որոնք նպաստում են տարածաշրջանում ապրանքաշրջանառությանը և սպասարկում են Հայաստանի ազգային-պետական շահերը. օրինակ՝ Ռուսաստանի և Վրաստանի միջև թունելի շինարարությունը: Մենք պետք է նպաստենք Վրաստանի և Աբխազիայի միջև տրանսպորտային հաղորդակցության բացմանը:

23. Որպես հնարավորություն դիտարկվելու է Եվրոպայից ուղևորներին ասիական երկրներ, օրինակ՝ Հնդկաստան, Չինաստան և հակառակ ուղղությամբ տարանցումների համար Հայաստանը տարածաշրջանային օդային հանգույցի վերածելու հեռանկարը: Հայաստանը կարող է դառնալ արաբական ավիաընկերությունների կողմից դեպի երրորդ երկրներ թռիչքների համար կարևոր հենակետ: Ակտիվորեն կօգտագործվեն բոլոր հնարավորությունները և ԵՄ-ի հետ վերջնականապես կվավերացվի օդային փոխադրումների մասին համաձայնագիրը: Ուսումնասիրելու ենք ազգային փոխադրող ունենալու հարցը:

24. Այս բոլոր գաղափարները անհրաժեշտաբար պետք է փոխկապակցվեն գլոբալ համագործակցության և աշխարհում առևտրային գործընկերության զարգացման Չինաստանի կառավարության «Մեկ գոտի, մեկ ճանապարհ» գաղափարի շրջանակներին:

25. Ինտենսիվորեն կխթանենք արաբական երկրների հետ ակտիվ առևտրատնտեսական հարաբերությունները՝ ԱՄԷ, Կատար, Քուվեյթ, ինչպես նաև՝ Եգիպտոս, Սիրիա, Իրաք:

26. Առանձնահատուկ կերպով հետամուտ ենք լինելու Հայաստանի՝ որպես դեպի ծով ելք չունեցող երկրի կարգավիճակից բխող իրավունքների իրացմանը:

Անվտանգ և կայուն պետություն

27. Օտար և ապազգային ուժերի ներթափանցումն ու ազդեցությունները կանխելու, ռազմական, տնտեսական, տեղեկատվական, բնապահպանական, էներգետիկ անվտանգությունն ապահովելու, ինչպես նաև կիբերհանցագործությունների դեմ համակարգված պայքարի նպատակով, արդիականացնելու ենք երկրի անվտանգության պետական համակարգը (զինված ուժեր, անվտանգության խորհուրդ, քաղաքացիական պաշտպանության և իրավապահ համակարգեր):

28. Ընդունելու և գործադրելու ենք Ազգային անվտանգության նոր ռազմավարություն, ռազմական նոր դոկտրին, ռազմարդյունաբերական համակարգի զարգացման և ԱԶԳ-ԲԱՆԱԿ նոր հայեցակարգեր: Ազգային արժեքների պաշտպանության հիմնախնդիրը ներառվելու է Ազգային անվտանգության ռազմավարություն մեջ, որպես առանցքային բաղադրիչ:

29. Վերակառուցելու ենք զինված ուժերը՝ գործադրելով ժամանակակից և համագործակցային պաշտպանական քաղաքականություն: Ստեղծելու ենք Հայաստանի և Արցախի անվտանգությունը, տարածքային ամբողջականությունը, պաշտպանությունն ու սահմանների անձեռնմխելիությունը ապահովող, մարտական խնդիրների կատարմանը համահունչ, արդյունավետ կառուցվածքով զինված ուժեր:

30. Առաջնային են լինելու Հայաստանի և Արցախի տարածքների բնակավորման և ինժեներական կառույցների օպերատիվ կահավորումը, ուժային և ոչ ուժային ռազմավարական զսպման կարողությունների տեխնոլոգիապես հագեցվածությունը, բարձր շարժունակության և ժամանակակից փորձի հիման վրա անձնակազմի պատրաստության համադրումը:

31. Բարեփոխելու ենք հասարակական կարգը և ներքին անվտանգությունը ապահովող իրավապահ համակարգը՝ ապաքաղաքականացնելով և այն ուղղելով հանցավորության դեմ պայքարի առաջնահերթ խնդրի լուծմանը:

32. Բացառելու ենք ոստիկանապետությանը բնորոշ իրավապահ հաստատությունների ուռճացված առկա համակարգը՝ ուժային ծառայությունների մեծամասնությունն ուղղելով երկրի պաշտպանության խնդիրների լուծմանը:

33. Հանրային և մասնագիտական քննարկումների հիման վրա ձևավորելու ենք առավել արդյունավետ աշխատող կառավարության կառուցվածք և պետական կառավարման համակարգ: Գործադիր իշխանությունը պետական և տեղական մակարդակով, լիարժեք հաշվետու ենք դարձնելու ժողովրդի ներկայացուցչական մարմիններին:

34. Առաջնահերթ կարգով վերականգնելու ենք գյուղատնտեսության և մշակույթի նախարարությունները:

35. Պետության կառավարմանն ու հանրային ծառայությանը հաղորդելու ենք նոր որակ՝ հիմնված պետականության ընկալման բարձր մակարդակի, պատասխանատվության, պրոֆեսիոնալիզմի և արժանապատիվ վարձատրության վրա:

36. Ձևավորելու ենք Հայաստան-Սփյուռք համագործակցության և երկխոսության նոր օրակարգեր, վերանայելու ենք երկքաղաքացիների՝ ՀՀ պետական կառավարման մեջ ներգրավելու սահմանափակումները, ներդնելու ենք գործակցության նոր մեխանիզմներ:

37. Հիմնվելով իրավունքի գերակայության սկզբունքի վրա, ներդնելու ենք մարդու հիմնական իրավունքների անմիջական գործադրումն ապահովող վարչական և մինչդատական նոր կառուցակարգեր:

38. Բացառելու ենք դատական համակարգի վրա քաղաքական իշխանության ճնշումները: Վերացնելու ենք քաղաքական դրդապատճառով անձին ազատությունից զրկելու արատավոր պրակտիկան:

39. Երաշխավորելու ենք քննչական մարմինների և դատախազության՝ գործադիր իշխանություններից անկախ գործունեությունը:

40. Սահմանադրահիրավական բարեփոխումներով վերաբաշխելու ենք լիազորությունները Նախագահի, Ազգային ժողովի և Կառավարության միջև: Համարժեք և գործադրելի ենք դարձնելու պատգամավորի և կառավարության անդամի լիազորությունները և անհատական պատասխանատվությունը:

41. Հեշտ կիրառելի ենք դարձնելու մասնակցային և անմիջական ժողովրդավարության ինստիտուտների գործադրումը (հանրաքվե, համաժողովրդական հարցումներ և այլն)՝ որպես ժողովրդի անմիջական կամքի արտահայտման արդյունավետ միջոց:

42. Որակյալ ենք դարձնելու իշխանություն-ընդդիմություն միասնական քաղաքական համակարգը՝ իրական ազդեցիկ լծակներ և հանրային

պատասխանատվություն նախատեսելով քաղաքական ընդդիմության համար՝ իշխանություններին վերահսկելու, զսպելու և հակակոռուպցիոն իրական պայքար ծավալելու հարցերում:

Համերաշխություն, համահայկական ներուժի մեկտեղում

43. Հաղթահարելու ենք ներազգային պառակտվածությունը՝ երկրում վերականգնելով համերաշխության և երկխոսության կենսական մթնոլորտը:

44. Բարեգործական հիմնադրամների և հումանիտար կազմակերպությունների հետ համատեղ ներդնելու ենք պատերազմի հետևանքով վիրավորում և սահմանափակ կարողություններ ստացած անձանց սոցիալականացման, վերապատրաստման և աշխատանքի տեղավորման ծրագրեր, որոնց միջոցով կլուծվի նրանց աշխատանքով ապահովելու հարցը:

45. Հաշմանդամություն (սահմանափակ կարողություններ) ունեցող անձանց համար մատչելի միջավայրի ապահովումը և հանրային կյանքին լիարժեք ինտեգրումը դրվելու է ամբողջական ծրագրային հենքի վրա՝ հստակ թիրախավորմամբ և ժամանակացույցով:

46. Գործադրելու ենք համահայկական կարողականության մեկտեղման՝ հոգևոր, կրթական, երիտասարդական, մարզական, մշակութային, լրատվական և տնտեսական քաղաքականություններ՝ որպես հասարակության արժեքային ճգնաժամը հաղթահարելու, պետականության հիմքերն ու ազգային անվտանգությունն ամրապնդելու, քաղաքացի ձևավորելու հենարաններ:

47. Համահայկական ներուժի մեկտեղման նպատակով կգործադրվի ազգային հարստության պահպանմանն ու աճին, տնտեսական, սոցիալական և բնապահպանական ռեսուրսների կապիտալացմանն ու Հայաստանի տնտեսական զարգացմանը նպատակաուղղված ներդրումային համալիր ծրագիր: Կստեղծվի բազմահարթակ ներդրումային ֆոնդերի համակարգ:

48. Ժողովրդագրական քաղաքականության երկարաժամկետ նպատակներ են դառնալու արտագաղթի ալիքի կանխումը և ներգաղթի ծրագրված կազմակերպումը, հատկապես գյուղական բնակավայրերում ծնելիության խթանումը, մահացության ցուցանիշի հարվածային նվազեցումը:

49.vՍոցիալական աջակցության գործող ծրագրերի վերահմաստավորման և նոր ծրագրային մոտեցումների ներդրման միջոցով հաջորդ երեխայի ծնունդը ընտանիքում դառնալու է զարգացման և սեփական երկրում ամրանալու նոր ու իրական հնարավորություն:

50. Հանրային կյանքի տարբեր ոլորտներում արդյունավետ կօգտագործվի կանանց ներուժը: Պետական կառավարման բոլոր մակարդակներում կանանց հավասարակշռված ներկայացվածության հասնելու նպատակով կորդեգրվի ազգային մեխանիզմ:

51. Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցուն երաշխավորվելու են իր բացառիկ կարգավիճակից բխող հնարավորություններ՝ իրացնելու մեր հոգևոր կյանքի շինության ու ազգապահպանման կարևոր առաքելությունը:

52. Իրականացվելու են մեր հայրենակիցների հայրենադարձության, հատկապես բարձր որակավորում ունեցող մասնագետների ներհոսքի ապահովման հատուկ նպատակային ծրագրեր:

53. Ձևավորելու ենք Հայաստանի և Սփյուռքի միասնական տեղեկատվական դաշտ, որն ապահովելու է փոխադարձ հավաստի լրատվություն:

54. Վերականգնվելու է վստահությունը «Հայաստան համահայկական հիմնադրամի» նկատմամբ՝ բացառելով հիմնադրամի միջոցների ոչ կանոնադրային օգտագործումը:

55. Չխաթարելով ազատ խոսքի և կարծիքի արտահայտման ազատությունը՝ կներդրվեն նոր կառուցակարգեր, որոնք կկանխարգելեն կեղծ լուրերի մշտական շրջանառությունը, հասարակական կարծիքի մանիպուլատիվ սխեմաները, անձնավորված կամ ներազգային թշնամանքը, ատելության խոսքը, պետական ինստիտուտների վարկաբեկումն ու նսեմացումը:

ՀԱՅԱՍՏԱՆ. ԱՊՐԵԼՈՒ ԵՐԿԻՐ

Տնտեսական քաղաքականություն

56. Հայաստանի Հանրապետության յուրաքանչյուր քաղաքացի պետք է իր աշխատանքով ապահովի իր, իր ընտանիքի և հաջորդ սերնդի համար՝ անվտանգ, բարեկեցիկ, արժանապատիվ և կանխատեսելի զարգացում երաշխավորող կյանք:

57. Հայաստանի Հանրապետության յուրաքանչյուր քաղաքացի պետք է հնարավորություն ունենա իր երկրում, իր հայրենիքում, իր պետության մեջ լիարժեքորեն դրսևորելու, իրացնելու իր մտավոր, ֆիզիկական և հոգևոր կարողությունները և դրա դիմաց ստանալ առավելագույն համարժեք՝ նյութական, բարոյական և հոգևոր փոխհատուցում: Այս նպատակին հասնելու

առաջին և անփոխարինելի միջոցը՝ արդյունավետ տնտեսությունն է:

58. Անմիջապես կիրականացվեն հակաճգնաժամային նախաձեռնություններ՝ սոցիալ-տնտեսական իրավիճակը կայունացնելու, գնաճը զսպելու, գործազրկության և աղքատության աճը, պետական միջոցների փոշիացումը և բանկային համակարգի հնարավոր ճգնաժամը կանխելու ուղղություններով:

59. Հատուկ ուշադրություն է դարձվելու բնակչության բարձր ռիսկային, հատկապես՝ սպառողական վարկերով ծանրաբեռնվածության խնդիրներին:

60. Տնտեսական հարաբերությունների և մրցակցության ոլորտում առավելագույնս կպահպանվեն խաղի արդար, թափանցիկ կանոններ և հավասար հնարավորություններ:

61. Վարվելու է քաղաքականություն՝ ուղղված կայուն տնտեսական աճին, զարգացող արդյունաբերությանն ու գյուղատնտեսությանը, առևտրի և ծառայությունների ոլորտում մեծաքանակ աշխատատեղեր ստեղծելուն, ինչպես նաև ենթակառուցվածքների և քաղաքաշինության զարգացմանը՝ մշակութային ժառանգության պահպանման և ժամանակակից բնակավայրերի կառուցման չափանիշների խիստ համադրմամբ:

62. Տնտեսական կայուն և բարձր աճ ապահովելու համար քայլեր ենք ձեռնարկելու՝ հաղթահարելու արտադրողականության ցածր մակարդակը. Այն հիմնականում պայմանավորված է օգտագործվող առկա տեխնոլոգիական մակարդակով՝ գործող հին սերնդի սարքավորումներով: Այս տեսանկյունից հատկապես կարևորվում է տեխնոլոգիական վերազինման համար բարենպաստ միջավայրի ձևավորումը:

63. Վճռականորեն արմատախիլ ենք անելու կոռուպցիան, գանձագողությունը՝ վերացնելով դրանք ծնող շարժառիթների ամբողջ շղթան:

64. Պարզեցվելու և հստակեցվելու են գործարարությամբ զբաղվելու իրավական ընթացակարգերը, բարձրացվելու է որոշումներ կայացնելու թափանցիկությունը, առավելագույնս բացառվելու է օրենքների երկիմաստությունը:

65. Վերանայելու ենք այն իրավական ակտերը, որոնք, խաթարելով մրցակցային միջավայրը, ընդունվել են՝ կոնկրետ տնտեսավարող սուբյեկտի տնտեսական շահից ելնելով: Կասեցնելու ենք այն օրենքների կիրարկումը, որոնք ձևավորում են ներդրումային անբարենպաստ միջավայր:

66. Վերանայելու ենք բյուջետային քաղաքականությունը, ներառյալ պետական

պարտքի կառավարման և պետական գնումների համակարգերը: Վերադառնալու ենք միջազգայնորեն ընդունված և կիրառվող ֆիսկալ քաղաքականության ոսկե կանոնին՝ արտաքին պետական պարտքի գումարները ծախսվելու են միայն ներդրումային ուղղություններով:

67. Գործադրվելու է արտաքին պարտքի դիմաց բնապահպանական և կայուն զարգացման ներդրումներ իրականացնելու ծրագիր: Այս շրջանակներում, արտաքին գործընկերների հետ պայմանավորված ձևաչափով, արտաքին պարտքի մարմանն ուղղված միջոցներով ֆինանսավորվելու են Հայաստանում բնապահպանական և կայուն զարգացման ծրագրեր:

68. Ֆինանսական, այդ թվում՝ բանկային և ապահովագրական ոլորտներում ապահովվելու են արդյունավետ աշխատելու անհրաժեշտ պայմաններ՝ հատկապես բանկային գաղտնիքի առումով:

69. Վերացվելու են ՓՄՁ զարգացման համար առկա խոչընդոտները. մասնավորապես, բարձրացվելու է առևտրի, ծառայությունների և արտադրության ոլորտի համար՝ ՓՄՁ «Շրջանառության հարկի» շեմը, այնուհետև անցնելու ենք ՓՄՁ-ների համար մեկ հարկատեսակի (օրինակ՝ միայն շրջանառության հարկի կամ հաստատագրված վճարների) սահմանմանը:

70. Չխախտելով պետական գնումների մրցույթների գործընթացում ՀՀ ստանձնած միջազգային պարտավորությունները՝նախապատվությունը տրվելու է հայկական արտադրության ապրանքներին, հատկապես՝ ռազմավարական և անվտանգային նշանակություն ունեցող ոլորտներում:

71. Գործադրվելու է հարկային խրախուսող քաղաքականություն: Հարկերը պետք է ոչ թե հավաքագրվեն, այլ վճարվեն ըստ օրենքի: Տեղական արտադրանքի մրցունակության բարձրացման բաղադրիչներից մեկն էլ հարկային օրենսդրությունն է: Այն պետք է ստեղծի օտար մրցակիցների համեմատ ավելի մրցունակ արտադրանք թողարկելու հնարավորություններ: Նաև պետք է բացառվեն արտահանմանը խոչընդոտող և լրացուցիչ վարչարարություն ստեղծող դրույթները:

72. Հավաքագրումից՝ պարտադիր վճարման ռեժիմին անցնելուն հասնելու ենք Պետական բյուջեի ծախսերի արդյունավետության շեշտակի բարձրացման միջոցով: Այն է՝ Հայաստանի Հանրապետության յուրաքանչյուր քաղաքացի իր առօրյա կյանքում համոզվելու է, որ իր վճարած հարկերը ծախսվում են առավելագույնս արդյունավետ և նպատակային:

73. Լրացուցիչ քննարկելու ենք շուկայական արժեքներին մոտարկված

կադաստրային արժեքներից անշարժ գույքի հարկի գանձման մոտեցումը՝ հիմքում դնելով սոցիալական արդարության սկզբունքը, հանրային շահը և բնակչության եկամուտները:

74. Վերացվելու են նախքան ստուգման ակտերը անբողոքարկելի դառնալը, դրանցում արձանագրված պարտավորությունների առնչությամբ քրեական գործերի հարուցման ներկա արատավոր պրակտիկան:

75. Ներդրումների խթանման նպատակով վերանայվելու է հարկման համակարգը՝ բացառելով հարկային բեռի անարդար ավելացումը:

76. Ստեղծվելու են բարենպաստ պայմաններ ընտանեկան միկրոբիզնեսի համար:

77. Գործադրվելու են լայն մասնակցային տնտեսական և սոցիալական ձեռներեցությանն ուղղված քաղաքականություններ:

78. Գործադրվելու է հայրենական արտադրողի շահերին և արտաքին առևտրի աշխուժացմանն ուղղված արտաքին առևտրային քաղաքականություն: Օգտագործվելու են Եվրասիական տնտեսական միության, Եվրամիության և Առևտրի համաշխարհային կազմակերպության ընձեռած բոլոր հնարավորությունները, երկկողմանի առևտրային համաձայանգրերով նախատեսված արտոնությունները: GSP, GSP+ համակարգերը օգտագործվելու են ողջ հնարավորություններով:

79. Արտաքին առևտրատնտեսական հարաբերությունների զարգացման տեսանկյունից կարևորվելու է տարբեր երկրներում ՀՀ դիվանագիտական ներուժը, ինչպես նաև առևտրական ներկայացուցչության արդյունավետ օգտագործումը: Վերականգնելու ենք զրոյականի հասած հարաբերությունները միջազգային ֆինանսական և տնտեսական կազմակերպությունների՝ IMF, WB, WTO, ADB, EBRD, EIB հետ, հատկապես ենթակառուցվածքների զարգացման ծրագրերի շրջանակներում:

80. Այն ճյուղերում, որտեղ մեծաքանակ աշխատատեղերի ստեղծումը լինելու է գերակայություն, օրինակ՝ տուրիզմի, գյուղատնտեսության, սննդի արդյունաբերության, ադամանդագործության և ոսկերչության, թեթև արդյունաբերության ոլորտներում ապահովելու ենք միջազգային մրցունակության և որակի աճ:

81. Տնտեսության առաջատարների շարքում է լինելու ռազմարդյունաբերությունը՝ որպես արդյունաբերական առաջատար և հեռանկարային ուղղություն:

82. Էներգետիկ քաղաքականությունը կառուցվելու է ժամանակակից և գործող ուղղությունների վրա: Նախաձեռնվելու են նոր ԱԷԿ-ի կառուցման տեխնիկա-տնտեսական հիմնավորման աշխատանքներ և սկսվելու են բանակցություններ հավանական ներդրողների հետ: Լուծում է տրվելու աղբի վերամշակման խնդրին՝ փոքր ջերմային կայանների կառուցման միջոցով, ինչը նաև հնարավորություն կտա ստանալ էլեկտրաէներգիա:

83. Հայաստանը պետք է դառնա մի մեծ շինհրապարակ: Էապես պարզեցվելու են շինթույլտվություններ ստանալու գործընթացները և ժամկետները. կարևորվելու են տեխնիկական անվտանգության, բնակավայրի ճարտարապետական տեսքի և ծանրաբեռնվածության հետ կապված նորմերը:

84. Հանքարդյունաբերությունը համապատասխանեցվելու է շրջակա միջավայրի պահպանության միջազգային չափանիշներին:

85. Ապահովելով սերունդների առջև պատասխանատու բնապահպանություն, ստեղծված նոր իրողությունների պայմաններում, գործադրվելու է ջրային ռեսուրսների կառավարման նոր ռազմավարական ծրագիր: Վերականգնվող ռեսուրսների օգտագործման ծավալներն ու եղանակները չեն գերազանցելու դրանց վերականգնման կարողությանն ու շրջակա միջավայրի աղտոտման ընդունելի մակարդակը, չսպառվող բնական ռեսուրսներն օգտագործվելու են առավելագույն ծավալներով՝ պահպանելով շրջակա միջավայրի վրա նվազագույն բացասական ազդեցության սկզբունքը: Ռազմավարական համարելով Արարատյան դաշտի ջրային պաշարների առաջանցիկ վերականգնումը, բացառելու ենք ստորերկյա ջրավազանի գերշահագործումն ու հյուծումը: Ընդլայնվելու են Հայաստանի անտառային տարածքները:

86. Բոլոր տեսակի տրանսպորտային միջոցների համար ոլորտի քաղաքա-կանության ուղենիշը լինելու է սպասարկման որակն ու հասանելիությունը, անվտանգությունը և աճող ուղևորահոսքերի ու բեռնափոխադրումների ծավալների լիարժեք ապահովումը: Նպատակադրվելու է տրանսպորտային պարկի թարմացումը:

Թվային Հայաստան

87. Մշակվելու և գործադրվելու է Հայաստանի թվային կառավարման օրակարգը: Այն ներառելու է պետական ծառայությունների մատուցման թվայնացում, ապահովելով առկա օպտիմալացված, հասանելի և անհատականացված պետական թվային ծառայությունները, տվյալների մշակման վրա հիմնված քաղաքականությունների մշակումն ու որոշումների կայացումը, պետական

մարմինների միջև արդյունավետ և «անտեսանելի» համագործակցության հնարավորությունների ընդլայնումը:

88. Իրականացվելու է թվային հմտությունների ընդլայնման, կրթության և աշխատաշուկայի պահանջների միջև արդյունավետ և գործուն կապի ստեղծման, «խելացի» մասնագիտացումների ներդրման և պետական կառավարման համակարգի աշխատակիցների շրջանում թվային կարողությունների զարգացմանն ու ընդլայնմանն ուղղված քաղաքականություն:

89. Ստեղծվելու են թվային ենթակառուցվածքներ, որոնց արդյունքում Հայաստանում կունենանք թվային ներառականության ապահովման համար համարժեք պայմաններ և Հայաստանը տվյալների տարածաշրջանային կենտրոն դարձնելու նախադրյալներ:

90. Ստեղծվելու է կիբերանվտանգության գործուն համակարգ, այդ թվում՝ պետություն-մասնավոր համագործակցությամբ:

91. Թվային տնտեսության ընձեռած գործիքներով սկսվելու է ոչ տեխնոլոգիական ճյուղերի թվայնացումը, զարգացվելու է «թվային ձեռներեցության» ուղղությունը, ինչպես նաև ընդլայնվելու են տվյալների հավաքագրման և վերլուծության հիման վրա բիզնես որոշումների կայացման հնարավորությունները:

92. Արտասահմանից հայազգի բարձրակարգ SS մասնագետների ներգրավման նպատակով սահմանվելու են օտարերկրյա SS մասնագետների եկամուտների հարկման խթանող լուծումներ: Նոր օրենսդրական լուծումներ են տրվելու նաև օտարերկրյա SS ընկերություններին՝ ՀՀ-ում ռեզիդենտ գրանցելու համար:

93. Հատուկ պայմաններ են սահմանվելու այն ընկերությունների համար, որոնք ապրանքներ և ծառայություններ են վաճառում համաշխարհային հանրահայտ միջազգային թվային հարթակներում:

94. Էլեկտրոնային առևտրի զարգացման նպատակով սկսելու ենք բանակցել միջազգային վճարահաշվարկային կազմակերպությունների հետ, ինչպիսիք են PayPal, Google Pay, Apple Pay, Samsung Pay և այլք. վերջիններիս՝ վճարահաշվարկային գործիքները հայաստանյան բաժանորդներին լիարժեք հասանելի դարձնելու նպատակով:

95. «Հայփոստ»–ի հիմքի վրա ստեղծվելու է նոր կառույց, որը հնարավորություն կտա բնակչությանը տարբեր ուղղություններով միջազգային առաջատար չափանիշներին համապատասխան ծառայություններ մատուցել:

Ներդրումային Հայաստան

96. Ընդունելու ենք ներդրումների խրախուսման և ներդրողների պաշտպանության ժամանակակից կառուցակարգեր: Նշանակետն է՝ առաջին տարում ապահովել առնվազն 500 մլն ԱՄՆ դոլարի ներդրում, իսկ 5 տարում ընդհանուր ծավալը հասցնել առնվազն 3 միլիարդ ԱՄՆ դոլարի:

97. Օտարերկրյա ներդրումները խթանելու նպատակով առաջին հերթին կընդունվի նոր օրենք, որով էապես կուժեղացվեն օտարերկրյա ներդրումների երաշխիքները և պաշտպանության մեխանիզմները: Կբացառվեն, վերջին տարիներին արատավոր պրակտիկա դարձած ճնշումները օտարերկրյա ներդրողների վրա:

98. Կսահմանվեն և կհստակեցվեն ներդրումային ծրագրերի առաջմղման և աջակցության մեխանիզմները: Այս նպատակով կսկսի աշխատել մեկ պատուհանի սկզբունքով արդյունավետ գործող օտարերկրյա ներդրումների խթանման կառույցը: Կակտիվացվի և կուժեղացվի ՓՄՁ զարգացման և աջակցության կենտրոնի գործունեությունը՝ վերականգնվելու են և ակտիվացվելու են մարզային կառույցները:

99. Պետության կողմից իրականացվող ներդրումային ծրագրերում լայնորեն կկիրառվեն Պետություն-Մասնավոր Գործակցության (ՊՄԳ) մեխանիզմները, միաժամանակ կկատարելագործվի ՊՄԳ օրենսդրական դաշտը:

100. Զարգացնելու ենք կապիտալի շուկան: Առանձնահատուկ կարևորելու ենք կորպորատիվ կառավարման լավագույն փորձի ներդրումը, արժեթղթերի շուկայի գործիքների լայն կիրառությունը և միջազգային շուկաներին արդյունավետ ինտեգրումը: Իրականացնելու ենք փոքր բաժնետերերի իրավունքների պաշտպանության օրենսդրական և իրավակիրառական բարեփոխումներ:

101. Ողջ երկրով մեկ ձեռնամուխ ենք լինելու շինարարության, գյուղատնտեսության և թեթև արդյունաբերության ոլորտներում լայնածավալ ներդրումների իրականացմանն ու նոր աշխատատեղերի ստեղծմանը, հատկապես նոր ներդրումային ծրագրերին՝ ուղղված այդ ճյուղերի տարածաշրջանային (առաջին հերթին Եվրասիական տնտեսական միություն և Ծոցի երկրներ) արժեշղթաներին ինտեգրմանը:

102. Հայաստանում պետք է անառարկելիորեն հարգվեն մտավոր սեփականության և հեղինակային իրավունքները, պատենտները և այլն: Հայաստանի որակի ենթակառուցվածքները լինելու են մրցունակ և ճանաչելի՝ ապահովելով

փորձաքննությունների և ստուգման լաբորատորիաների ու կենտրոնների արդյունավետ աշխատանքը:

Յուրընկալ Հայաստան

103. Զբոսաշրջության ոլորտը պետք է վերականգնի Հայաստանում դինամիկ զարգացող ճյուղերից առաջատարի դիրքը: Կորդեգրվի զբոսաշրջության բնագավառի խթանման նոր քաղաքականություն: Պետական աջակցությամբ կվերականգնվեն ոլորտին համավարակի պատճառած կորուստները (հարկային արտոնություններ, պետություն-մասնավոր գործընկերության ծրագրեր, սուբսիդիաներ և հարկերի վերադարձի մեխանիզմներ): Այն կնպաստի Հայաստանի զբոսաշրջային գրավչության բարձրացմանը, համաչափ զարգացմանը և Հայաստանում աղքատության նվազեցմանը:

104. Կարդիականացվի զբոսաշրջության զարգացման ռազմավարությունը՝ հստակ տարանջատելով պետության և մասնավոր հատվածի ուղղակի պարտավորություններն ու նախանշելով համագործակցության կոնկրետ ոլորտները:

105. Պետությունը ապահովելու է զբոսաշրջության զարգացմանն անհրաժեշտ ենթակառուցվածքները և մշակութային ու հոգևոր ժառանգության պետական հոգածությունը:

106. Պետությունը աջակցելու է միջազգային հարթակներում Հայաստանի զբոսաշրջային ներուժի և գրավչության ներկայացման գործընթացներին: Հատկապես կարևորվելու են մշակութային, կրոնական, արկածային, էկո, գաստրո և գինու զբոսաշրջության տեսակները:

107. Պետության առաջնային խնդիրներից է ներգնա և արտագնա զբոսաշրջիկների անվտանգության և ազատ տեղաշարժի ապահովումը:

108. Մշակվելու և գործադրվելու է զբոսաշրջության ոլորտում ներդրումներ ներգրավելու, երկրի միասնական բրենդի ձևավորման և դրա ճանաչելիության բարձրացման հատուկ ծրագիր:

«Արտադրված է Հայաստանում»

109. «Արտադրված է Հայաստանում» կարգախոսը դարձնելու ենք ճանաչելիության և որակի գրավական: Հայաստանը պետք է տարածաշրջանում և

աշխարհում դիրքավորվի որպես երկիր, որն արտադրում է բարձրորակ և պահանջված արտադրանք: «Արտադրված է Հայաստանում» պիտակը պետք է ասոցացվի որակյալ, օգտակար, անվտանգ և մատչելի հասկացությունների հետ:

110. Արմատապես բարեփոխելու ենք արտադրվող ապրանքների որակի և դրա հավաստագրման պետական վերահսկողության համակարգը:

111. Արդիականացնելու ենք անասնաբուժության ողջ համակարգը:

112. Պետությունը, մասնավոր ընկերությունների հետ համագործակցությամբ, պետք է մեր արտադրանքն ավանդական շուկաներում գովազդելու և նոր շուկաներ որոնելու հատուկ արշավ նախաձեռնի: Մեզ համար նոր շուկաներն են Ծոցի երկրները, Չինաստանը, Աֆրիկայի երկրները, աստիճանաբար նաև՝ ԵՄ-ը:

113. Պետք է ստեղծվեն Հայաստանից մեկ միասնական հովանոցային բրենդի ներքո ապրանքների (օրինակ՝ խմելու ջուր, հյութեր, մրգեր ու բանջարեղեն, հատապտուղներ, վերամշակված գյուղմթերք) արտահանման միասնական լոգիստիկ կենտրոններ: Սա կապահովի որակի և բնույթի առումով միանման արտադրանքի անհրաժեշտ քանակի առկայություն:

114. Նոր մեխանիզմներ կստեղծվեն Հայաստանում արտահանման ուղղվածություն ունեցող արտադրանքի ապահովագրության համար:

115. Կգործադրվեն Հայաստանում արտադրված ապրանքների առաջմղման գործում սփյուռքի հնարավորությունները, օրինակ՝ այդ գործում հայկական ծագում ունեցող հայտնիների օգնությունը:

116. Մենք կարող ենք համարձակորեն մտածել նաև Հայաստանից ռազմատեխնիկական բնույթի արտադրանքի արտահանման մասին:

117. Նախաձեռնելու ենք քայլեր, որ թույլ կտան ընդարձակել որոշ ավանդական ապրանքների, օրինակ՝ գորգերի արտադրությունը և խրախուսել ապրանքների նոր տեսակների արտադրանքը: Հեռանկարային է համարվում օրգանիկ գյուղատնտեսական ապրանքների արտադրության ընդարձակումը:

Կրթություն և գիտություն

118. Կրթությունը, գիտությունը և մշակութը, լինելու են պետական քաղաքականության առանցքային առաջնահերթություններ, հասարակության արժեքային ճգնաժամը հաղթահարելու և ՀՀ քաղաքացի ձևավորելու կենսական հենարան:

119. Կրթության ոլորտի բարեփոխման հիմքում լինելու է կրթվածությունը՝ որպես երկրում որակյալ մարդկային ներուժի ձևավորման նախապայման: Այդ նպատակով վերանայելու ենք կրթության կառավարման և վերահսկման ողջ շղթան, հանրակրթության պետական և առարկայական չափորոշիչները, որդեգրելու ենք Հայաստանի զարգացմանն ուղղված կրթական մոդել:

120. Որակյալ կրթություն ենք ապահովելու երկրի ողջ տարածքում, բացառելու ենք լեռնային, բարձրլեռնային և սահմանամերձ համայնքներում դպրոցների օպտիմալացումը: Նախադպրոցական կրթության հասանելիությունը հասցնելու ենք 90-95 տոկոսի:

121. Գյուղական համայնքներում ուսուցիչների պակասը լրացնելու և դպրոցական կրթության որակի բարձրացման համար կներդրվի այդ համայնքներում աշխատող ապագա ուսուցիչների սոցիալական երաշխիքների համակարգ:

122. Մշակվելու և ներդնելու ենք հաջորդ սերնդի դպրոցական դասագրքերի և ուսումնամեթոդական նյութերի, այդ թվում՝ թվային, տեխնիկական և բովանդակային նոր չափորոշիչները, որոնք կապահովեն դասագրքերի կառուցվածքի և բովանդակության համապատասխանությունը աշակերտների տարիքին և գիտելիքներին:

123. Մոտ ապագայում կապակենտրոնացվի և կթվայնացվի դպրոցների ավարտական քննությունների և ԲՈՒՀ-երի միասնական ընդունելության քննությունների անցկացման համակարգը: Թվայնացումը թույլ կտա բարձրացնել կրթական արդյունքների որակի վերահսկողությունը: Ընդունելության քննությունների կազմակերպման ապակենտրոնացումը թույլ կտա ապագա ուսանողներին քննությունները հանձնել իրենց մարզերում: Վերանայելու ենք ԲՈՒՀ-երի կառավարման խորհուրդների ձևավորման կարգերն ու չափանիշները:

124. Մինչև 50 տոկոսով կավելացվեն բնագիտություն, տեխնոլոգիա, ճարտարագիտություն, մաթեմատիկա և հայագիտական ուղղություններով մասնագիտացումների ֆինանսավորումը մեկ ուսանողի մասով: Ընդհանուր առմամբ՝ հիմնովին վերանայվելու են ուսանողներին տրամադրվող ֆինանսական աջակցության բոլոր տեսակները՝ այդ աջակցության հասցեականությունը բարելավելու նպատակով:

125. Արտոնություններ կսահմանվեն բարձր որակավորմամբ արտերկրյա մասնագետներին՝ ՀՀ գրանցում ունեցող գիտատեխնիկական կազմակերպություններում աշխատանքի վերցնելու դեպքերում: Կձևավորվի անձեռնմխելի կապիտալով պետական հիմնադրամ, որը կֆինանսավորի գիտական

առաջնահերթությունների ուղղությամբ արտերկրյա առաջատար մասնագետների ՀՀ գիտական և բուհական համակարգերում մասնակի և ամբողջական ներգրավվածությամբ դասավանադումը և երկարաժամկետ գիտական գործունեությունը:

126. Որդեգրելու ենք գիտության կառավարման և ֆինանսավորման արդյունավետ մոդել: Սահմանելու ենք գիտության գերակա ուղղությունները՝ դրանք ծառայեցնելով երկրի անվտանգային և մրցակցային խնդիրներին, ռազմարդյունաբերական ոլորտին:

127. Ինովացիոն համակարգի ստեղծման նպատակով իրականացվելու են համալիր միջոցառումներ՝ ապահովելու գիտության արդյունքը կոնկրետ կիրառական ու սպառողական արդյունքների վերածելու ողջ շղթայի աջակցումն ու ֆինանսավորումը, ինչպես նաև՝ գիտական արդյունքի ստեղծման բոլոր փուլերից դրա առևտրայնացման ապահովումը:

Մշակույթ

128. Որդեգրվելու է մշակույթի ոլորտի զարգացման բեկումնային ծրագիր և ռազմավարություն՝ նպատակ ունենալով հանրության բարոյահոգեբանական մթնոլորտի առողջացումը, հոգևոր աղքատության հաղթահարումը, անհատի և հասարակության հոգևոր-մշակութային զարգացման ինստիտուցիոնալ պայմանների ապահովումը, կառավարման արդյունավետ մեխանիզմների ներդրումը, մշակութային ենթակառուցվածքների արդիականացումը, ստեղծագործական ներուժի բացահայտումն ու խթանումը:

129. Ազգային մշակույթի նկատմամբ ակնածանք ձևավորող շարունակական ծրագրերով կանխվելու են հայ ինքնությանը սպառնացող վտանգները, բարձրացվելու են գեղարվեստական կրթության մակարդակն ու հասանելիությունը, արդյունավորվելու է Սփյուռքի ներուժը:

130. Բարելավվելու է ոլորտի օրենսդրությունը, ինչը հնարավորություն կտա առավելագույնս պաշտպանել ազգային պատմամշակութային անշարժ հուշարձանները, զարգացնել թանգարանային գործը, գրադարաններն ու ժամանակակից արվեստը:

131. Պետությունը խրախուսելու և աջակցելու է ոչ պետական մշակութային կոլեկտիվներին, ինչպես նաև անհատներին՝ բարենպաստ պայմաններ ստեղծելով նրանց համար՝ օգտագործելու մշակութային ենթակառուցվածքների և հաստատությունների հնարավորությունները:

132. Կմշակվեն հայկական մշակութային արտադրանքի արտահանման, միջազգայնացման, արվեստի շուկաներում դիրքավորման նոր մեխանիզմներ և քարտեզներ:

133. Կմշակվի Գիտական, կրթական և մշակութային Նվիրատվական անձեռնմխելի կապիտալով ֆոնդերի օրենսդրությունը: Դա թույլ կտա շահութահարկի մինչև 5 տոկոսը փոխանցել այդ հիմնադրամներին՝ ընդգծելով պետության առաջնահերթությունը և խթանելով ներդրումները այդ ոլորտներում:

Երիտասարդություն և սպորտ

134. Մշակվելու և գործադրվելու է երիտասարդական պետական քաղաքականություն՝ միտված հայ երիտասարդի քաղաքացիական գիտակցության ձևավորմանը: Նրա սոցիալական, տնտեսական, հոգևոր-մշակութային լիարժեք իրացումն ու զարգացումը ապահովելու համար կստեղծվեն երաշխավորված պայմաններ և իրական հնարավորություններ:

135. Պետության հոգածության թիրախում են լինելու երիտասարդ ընտանիքների սոցիալական երաշխիքներն ու բնակարանային խնդիրները:

136. Մեծացվելու են սպորտի ֆինանսավորման ծավալները, բարելավվելու են մարզադպրոցների և ակումբների աշխատանքները, մարզիչների սոցիալական պայմանները: Միջազգային ասպարեզում հայ մարզիկների և ազգային հավաքականների պատշաճ մասնակցությունն ապահովելու նպատակով կարևորվելու է պետության մասնակցային դերը:

137. Սպորտի ներուժը ծառայեցվելու է Հայաստանի միջազգային ճանաչելիությանը:

Սոցիալական պաշտպանություն

138. Յուրաքանչյուր քաղաքացի կունենա կրթության, աշխատանքի և կեցության անհրաժեշտ պայմաններ՝ իր աշխատանքով, իր և իր ընտանիքի բարեկեցությունը կառուցելու համար: Այսպիսով, քաղաքացին սեփական նպաստը կբերի Հայաստանի ժողովրդի, պետության և հաջորդ սերնդի անվտանգ, արժանապատիվ և կանխատեսելի զարգացմանը:

139. Վարվող ոլորտային քաղաքականությունների, ներառյալ՝ արդար և արդյունավետ սոցիալական քաղաքականության ակնառու արդյունքներից են լինելու աղքատության և գործազրկության ծավալների նվազումը, արտագաղթի

կասեցումը և ներգաղթի համար բավարար պայմանների ստեղծումը, թոշակների և աշխատավարձերի բարձրացումը, երկրում իրական միջին խավի ձևավորումը և կայացումը: Հետևողականորեն գործադրվելու է կենսապահովման նվազագույն բյուջեի վրա հիմնված քաղաքականություն:

140. Տնտեսական զարգացմանը զուգահեռ՝ առաջանցիկ բարձրացնելու ենք կյանքի որակը: Յուրաքանչյուր ընտանիք, կյանքի դժվարին իրավիճակում հայտնված յուրաքանչյուր ոք կզգա պետության անմիջական և համարժեք աջակցությունը:

141. Ամբողջական փաստերի և իրատեսական գնահատումների հիման վրա անդրադարձ կկատարվի պարտադիր կուտակային կենսաթոշակային համակարգին: Կենսաթոշակային համակարգը պետք է ապահովի միջսերնդային և ներսերնդային համերաշխությունը, հասարակության բոլոր անդամների համար արժանապատիվ թոշակավորման սկզբունքի լիարժեք գործադրումն ու համակարգի երկարաժամկետ կայունությունը:

142. Հետևողականորեն վարվելու է արժանապատիվ վարձատրության քաղաքականություն: Առաջնահերթորեն բարձրանալու են զինվորականների, ուսուցիչների, բուժաշխատողների, դասախոսների, գիտնականների կենսամակարդակը և սոցիալական ապահովությունը: Տնտեսական աճին համաչափ և գնաճից բարձր տեմպերով կբարձրացվեն թոշակների, սոցիալական և ընտանեկան նպաստների, նվազագույն աշխատավարձի չափերը: Անապահով ընտանիքների աշխատանքային տարիքի աշխատունակ անձանց համար պետական լիարժեք աջակցությամբ կապահովվի կայուն զբաղվածություն՝ արժանապատիվ վաստակով:

143. Խթանելու ենք կորպորատիվ սոցիալական պատասխանատվությունը: Աշխատողների իրավունքները համակողմանի պաշտպանելու նպատակով մեծացնելու ենք արհեստակցական և գործարարների միությունների դերակատարությունը՝ կազմակերպությունների՝ ճյուղային, տարածքային, հանրապետական մակարդակներում սոցիալական երկխոսության և գործընկերության կայացման ճանապարհով:

Առողջապահություն

144. Առաջնահերթ կերպով կանգնեցվելու է համավարակի մահաբեր թափանիվը՝ բնակչությանն ապահովելով անհրաժեշտ քանակի և որակի պատվաստանյութով: Կստեղծվեն հիվանդանոցային բավարար պայմաններ, էապես կխրախուսվեն համավարակի դեմ պայքարում աշխատող մասնագետներն ու ծառայությունները:

145. Մշակվելու է առողջապահության համակարգի զարգացման նոր ռազմավարությունը՝ ինչպես մոտակա տարիների, այնպես նաև երկարատև ժամանակահատվածի համար: Առաջնահերթ ուշադրություն է դարձվելու բժիշկների և բուժաշխատողների մասնագիտական, իրավական և սոցիալական պաշտպանվածությանը:

146. Մեկ տարվա ընթացքում մշակվելու և ներդրվելու են, ինչպես նաև էլեկտրոնային առողջապահության համակարգի միջոցով վերահսկվելու են ամենատարածված 100 հիվանդությունների կլինիկական ուղեցույցներն ու գործելակարգերը: Արդյունքում կունենանք հնարավորինս ստանդարտացված, ապացույցների վրա հիմնված, լայն կիրառություն ունեցող բուժման չափորոշիչներ: Առողջապահական ապահովագրությունը առավել մատչելի և լայն ընգրկվածություն ձեռք կբերի:

147. Գործադրվելու է «Ոչ մի քաղաքացի՝ առանց պատշաճ բուժման հնարավորության» սկզբունքը: Ապահովվելու է բնակչության համար փաստացի անվճար առողջապահություն նվազագույն բազային փաթեթի հիման վրա: Առողջական խնդիրները չպետք է պատճառ դառնան քաղաքացիների աղքատացման կամ նրանց սոցիալական վիճակի վատթարացման: Կլուծվի սոցիալապես խոցելի խմբերի առողջապահական ծառայություններից լիարժեք հասանելիության հարցը :

148. Յուրաքանչյուր մարզում լինելու է առնվազն մեկ բուժհաստատություն, որը տեխնիկական և մասնագիտական հագեցվածությամբ, ծառայությունների շրջանակով և որակով չի զիջելու մայրաքաղաքի բժշկական կենտրոններին:

149. Խրախուսվելու է փորձառու բժիշկների և երիտասարդ մասնագետների գործունեությունը մարզերում:

Գյուղատնտեսություն

150. Պետական աջակցության հիմնական և առաջնահերթ շահառուներ են լինելու փոքր ու միջին գյուղացիական տնտեսություններն ու ձեռնարկությունները: Ծրագրեր են իրականացվելու նրանց արդյունավետության և եկամտաբերություն աճի, գյուղատնտեսական արժեշղթաներին ինտեգրման ուղղությամբ:

151. Խթանվելու է բարձրարժեք և օրգանական գյուղատնտեսության զարգացումը: Գործուն քայլեր են իրականացվելու Հայաստանում գյուղատնտեսության արդիականացման ուղղությամբ: Խրախուսվելու է ինտենսիվ գյուղատնտեսությունը, ջրախնայող ոռոգման համակարգերի ներդրումը:

152. Հետևողականորեն մեծացվելու են մշակվող հողերի մակերեսները: Մշակվելու են գյուղատնտեսության ոլորտի սուբսիդավորման նոր մոտեցումներ՝ առաջին հերթին նախապատվությունը տալով ֆերմերների հետ ուղղակի հարաբերություններին:

153. Առաջիկա գյուղատնտեսական աշխատանքները և բերքահավաքը դիտարկվելու են որպես հրատապ խնդիր: Մթերման գործընթացի պատշաճ ապահովման համար վերամշակող կազմակերպություններին տրա¬մա¬դրվելու են անհրաժեշտ շրջանառու միջոցներ:

154. Հիմնարար փոփոխության կենթարկվի գյուղատնտեսության մեջ սուբսիդավորման գործող համակարգը, անցում կատարելով միջնորդավորված (ջուր վաճառող, պարարտանյութ վաճառող, դիզվառելիք վաճառող) սուբսիդա-վորումից գյուղատնտեսական արտադրանք արտադրողի ուղղակի, նպատակա-յին սուբսիդավորմանը: Վերականգնելու, ակտիվացնելու ու ընդլայնելու ենք մարզային ԳԱՄԿ-երի աշխատանքը, նպատակ ունենալով գյուղատնտեսության ոլորտում ներդնել և կիրառել լայնածավալ և արդյունավետ խորհրդատվության, և բացառապես դրա վրա հիմնված սուբսիդավորման համակարգը:

155. Երեք տարին մեկ, պետբյուջեի միջնաժամկետ ծախսային ծրագրին զուգահեռ՝ կկազմվի և կհաստատվի «ՀՀ պարենային հաշվեկշիռը»:

Համաչափ զարգացում

156. Անվտանգ, համաչափ և կայուն զարգացման համատեքստում վերատեսու-թյան ենք ենթարկելու Հայաստանի վարչատարածքային բաժանումը և համայնքների խոշորացման ծրագրերը, ապակենտրոնացնելու ենք պետական կառավարումը: Տեղական ինքնակառավարման հարցերում առաջնահերթ ենք համարելու բնակչության կարծիքը, չափելի ենք դարձնելու համայնքային զարգացման ծրագրերը՝ներդնելով այն ապահովող համակարգ:

157. Առաջիկա մեկ տարում անհրաժեշտ բոլոր ուղղություններով լայն թափ է հաղորդվելու տարածքային համաչափ զարգացմանը՝ մարզային բոլոր կենտրոնների շուրջ իրական լոկոմոտիվի ներուժ ապահովելով:

158. Երևան քաղաքում ներդրվելու է տրանսպորտային պարկի և համակարգի արդիականացման ծրագիր: Այն նպաստելու է ոչ միայն մայրաքաղաքի հարմարավետության, այլ նաև Երևանի՝ որպես տարածաշրջանում նոր տուրիստական հանգույցի գրավչության մեծացմանը:

159. Ավարտվելու է Երևանում Կասկադի համալիրի շինարարությունը: Ճարտարապետական նոր լուծումներով արդիականացվելու են Երևանի տեսարժան վայրերը, թանգարանային տնտեսությունը, այդ թվում Շառլ Ազնավուրի տուն-թանգարանը և Էրեբունի թանգարանը:

160. Հատուկ ուշադրություն է դարձվելու Գյումրու զարգացմանը: Գյումրի-Անի առանցքը կարող է Հայաստանի հյուսիսում նոր, հետաքրքիր տուրիստական կլաստեր դառնալ: Այդ համատեքստում կարևորվում է Գյումրու օդանավակայանի արդիականացումը:

161. Պետություն-մասնավոր գործակցության շրջանակներում նոր լիցք է հաղորդվելու Դիլիջանում ներդրումների խրախուսման օրենքի կիրառմանը, և քաղաքի համակարգային զարգացման մասշտաբային նախագծերին:

162. Պետություն-մասնավոր գործընկերության շրջանակներում գործարկվելու է Գորիսի շրջանի Խնձորեսկ համայնքում յուրահատուկ տուրիստական կլաստերի ստեղծման ծրագիրը, որը կապահովի Խնձորեսկ-Գորիս-Տաթև առանցքի ակտիվացումը:

163. Լոռիում նախատեսվում է իրագործել զբոսաշրջության զարգացման ծրագիր՝ ընդգրկելով՝ Վանաձորը, Ստեփանավանը և Ախթալան: Այս ուղղությունը դառնալու է Հայաստանի և Վրաստանի միջև անդրսահմանային զբոսաշրջության յուրօրինակ ուղղություն:

164. Տարածաշրջանային լոգիստիկ հնարավորությունների զարգացման նպատակով ձևավորվելու է առնվազն մեկական բազմաֆունկցիոնալ տարածաշրջանային լոգիստիկ կենտրոն՝ Շիրակի և Սյունիքի մարզերում:

165. Սևանը ազգային հարստություն է, ռազմավարական կարևորագույն պաշար: Այն կդիտարկվի ՄԱԿ-ի կենսոլորտային տարածքի կառավարման հայեցակարգի համատեքստում՝ համադրելի դարձնելով ավազանի բնակչության կայուն զարգացումն ու բնապահպանական շահերը:

166. Իրականացվելու է Սևանա լճի շուրջ առկա մաքրման համակարգերի արդիականացում և նորերի ստեղծում: Ավելացվելու է նոր կայանների թիվը, ներդրվելու են կեղտաջրերի կենսաբանական մաքրման մեխանիզմներ:

167. Իրականացվելու է փոքր և միջին ջրամբարաշինության լայնածավալ ծրագիր: Առաջնահերթ կառուցման ենթակա են 11 փոքր և միջին ջրամբարներ՝ Արգիճ, Աստղաձոր, Ելփին, Խնձորուտ, Վերնաշեն, Խաչիկ, Քասախ, Հախում, Արթիկ, Կողբ, Խնձորեսկ: Գործարկվելու է Շիրակ - Արմավիր ջրատարի

կառուցման ծրագիրը: Արմավիրի տարածաշրջանում կնախատեսվի 5 ջրամբարների կառուցում, որը հնարավորություն կտա շուրջ 5 հազար հեկտար հողատարածք դարձնել ոռոգելի, իսկ 52 հազար հեկտար՝ կայուն ոռոգելի:

Ճանապարհաշինություն, տրանսպորտ, բեռնափոխադրումներ

168. Կմեկնարկի ռազմավարական նշանակություն ունեցող և անավարտ ճանապարհների կառուցումը. Մասնավորապես՝ Հյուսիս – Հարավ ավտոճանապարհի Երևան – Գյումրի հատվածի՝ Աշտարակ - Թալին և Թալին – Գյումրի, նաև Ալավերդի – Բագրատաշեն ճանապարհները:

169. Կիրականացվի Հյուսիս-Հարավ մայրուղու՝ Սիսիան – Քաջարան ճանապարհահատվածի կառուցման ծրագիրը, որը կներառի մի քանի թունել և կամուրջ:

170. Վերակառուցվելու է Բերդ – Նավուր – Իջևան ճանապարհը:

171. Շարունակվելու են ճանապարհների բարելավման աշխատանքները, որոնք ընդգրկելու են նաև միջգյուղական և ներգյուղական ճանապարհներն ու փողոցները:

172. Կմեկնարկեն ՀՀ բոլոր համայնքների տրանսպորտային հասանելիություն ապահովման և Երևանի ճանապարհների բեռնաթափմանն ուղղված աշխատանքները: Կիրագործվի ՀՀ միջքաղաքային և Երևան քաղաքի տրանսպորտային նոր սխեմա: Կպատրաստվի էլեկտրոնային քարտեզ, ըստ որի ՀՀ բոլոր համայնքները կունենան տրանսպորտային հասանելիություն և արդյունքում էականորեն կբարելավվի գործող տրանսպորտային երթուղային ցանցը, կբեռնաթափվեն Երևան քաղաքի ճանապարհները:

173. Մայրաքաղաքի տրանսպորտի համակարգի բարեփոխումը հանդիսանալու է երկրի տրանսպորտային ռազմավարության մաս և համապետական մասշտաբով բարեփոխումների առանցքային մեկնարկ: Աշխատանքներ կիրացվեն մետրոյի ցանցը զարգացնելու ուղղությամբ :

174. Թռիչքների անվտանգության ապահովումը և դեպի ԵՄ հայկական ավիաընկերությունների թռիչքի արգելքի վերացումը լինելու են Հայաստանի իշխանության առաջնահերթությունը:

175. Ռազմավարական ներդրողի հետ կմշակվի և կիրականացվի «Զվարթնոց» օդանավակայանի նոր տերմինալային և արտադրական-հասարակական գոտու համալիր զարգացման ծրագրերը:

176. Դիտարկելու ենք հյուսիսային ուղղությամբ երկաթուղային հաղորդակցության վերականգնման հնարավորությունը. Իջևան-Դիլիջան-Վանաձոր-Գյումրի: Կվերականգնվեն և կարդիականացվեն հին ճյուղերը, այդ թվում Երևան-Դիլիջանը, կկառուցվի Դիլիջանից Վանաձոր նոր ճյուղը:

177. Երկրի տրանսպորտային խնդիրները լուծվելու են ամբողջական ծրագրի շրջանակներում՝ որպես թիրախ ունենալով միասնական տրանսպորտային համակարգի ձևավորումը երկրի ամբողջ տարածքում:

178. Կմեկնարկեն Հայաստանի տարածքով Իրանից դեպի Եվրոպա հնարավոր կարճ և լոգիստիկ տեսանկյունից հարմար բեռնափոխադրումների պրակտիկ գործարկմանն ուղղված աշխատանքները:

ՍԻՐԵԼԻ ՀԱՅՐԵՆԱԿԻՑ,

Հայաստանը ծանր ժամանակներ է ապրում, սակայն ընտրությունը շատ պարզ է: Կա երկու տարբերակ՝ հրատապ կասեցնել այս աղետալի անկումը, բուժել վերքերն ու նորից ոտքի հանել երկիրը, կամ՝ գնալ նոր կորուստների:

Ովքեր իրենց ապագան տեսնում են Հայաստանում, նրանց համար ընտրությունը հստակ է.

ԴԵՊԻ ՈՒԺԵՂ ՀԱՅԱՍՏԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆ

ԴԱՇԻՆՔ

www.դաշինք.հայ